ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱՍՏԱՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը – Գագիկ Եգանյան

Զբաղեցրած պաշտոնը – ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայության պետ

Գործուղման վայրը և ժամկետները – Աստանա, Ղազախստանի Հանրապետություն, 2017թվականի օգոստոսի 24-26-ը

Հրավիրող կողմը – Եվրասիական Տնտեսական Հանձնաժողով

Գործուղման նպատակը – Մասնակցել "*Եվրասիական շաբաթ*" 2-րդ միջազգային ֆորումի շրջանակներում անցկացված "*Աշխատանքի միասնական շուկայի զարգացումը՝ առավելությունները, գաղափարները, հեռանկարները*" թեմայով կլոր սեղանին:

Քննարկված թեմաները – Կլոր սեղանի ընթացքում ներկայացրել եմ "*Ինտեգրացիոն գործընթացների ամրապնդումը ԵԱՏՄ-ի միգրացիայի ոլորտում*" թեմայով զեկույցը, որում անդրադարձել եմ աշխատանքային միգրացիայի երևույթի կարևորությանը Հայաստանի համար, այնուհետև վեր եմ հանել ԵԱՏՄ-ի անդամակցությամբ պայմանավորված մի շարք խնդիրներ: Ելույթի վերջում կոնկրետ առաջարկներ եմ կատարել աշխատանքային միգրացիայի ոլորտում ինտեգրացիոն գործընթացների խորացման նպատակով:

Ելույթի նախապատրաստման գործում արժեքավոր առաջարկներ են ստացվել ԱԳՆ-ի ԱՊՀ վարչության պետ պրն. Ա. Ղևոնդյանի կողմից:

Միջոցառման ընթացքում հանդիպումներ եմ ունեցել նաև Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի տարբեր պաշտոնյաների հետ:

Գործուղվող՝ Գ. ԵԳԱՆՅԱՆ
28/08/2017թ.